ՏԵՂԵԿԱՆՔ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 48. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը (այսուհետ՝ դիվանագիտական անձնագիր) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվող՝ անձը հաստատող փաստաթուղթ է, որը հաստատում է, որ դրա կրողը դիվանագետ կամ, սույն օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, այն կրելու իրավունքն ունեցող անձ է: Դիվանագիտական անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Դիվանագիտական անձնագիրը տրամադրելու, տրամադրումը մերժելու, անվավեր ճանաչելու, ուժը կորցնելու, վավերականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով:**

(48-րդ հոդվածը լրաց. 15.06.22 ՀՕ-256-Ն)

(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

~~**Հոդված 50. Դիվանագիտական անձնագրի տրամադրման, մերժման և անվավեր ճանաչելու կարգը**~~

~~***(վերնագիրը խմբ. 15.06.22 ՀՕ-256-Ն)***~~

~~1. Դիվանագիտական անձնագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի հիման վրա՝ առավելագույնը հինգ տարի վավերականության ժամկետով, բայց ոչ ավելի, քան «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետները:~~

~~2. Դիվանագիտական անձնագրի տրամադրումը մերժվում է, եթե՝~~

~~1) դիմումատուն ներկայացրել է ակնհայտ կեղծ փաստաթղթեր.~~

~~2) դիմումատուն չի ներկայացրել օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան կազմված փաստաթղթեր.~~

~~3) դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, բացառությամբ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ անձին դիվանագիտական անձնագրի տրամադրման դեպքի:~~

~~3. Պաշտոնավարության ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, համապատասխան պաշտոնատար անձինք իրենց դիվանագիտական անձնագրերը հանձնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն:~~

~~Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության ավարտից հետո Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, վերադարձած դիվանագետների ընտանիքի անդամներն իրենց դիվանագիտական անձնագրերն ի պահ են հանձնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն:~~

~~4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան՝ չհանձնված, ինչպես նաև կորած, կեղծված կամ օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված դիվանագիտական անձնագրերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ճանաչում է անվավեր:~~

~~5. Դիվանագիտական անձնագիրը տրամադրելու, հաշվառելու, տրամադրումը մերժելու, հետ վերցնելու և անվավեր ճանաչելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:~~

~~(50-րդ հոդվածը խմբ. 15.06.22 ՀՕ-256-Ն)~~

~~(15.06.22 ~~<u>ՀՕ-256-Ն</u>~~ օրենքն ունի անցումային դրույթ)~~